



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թիի 27

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔՍԱՆԵՑԹՆԵՐՈՐԴ

25 ՅՈՒՆԻՍ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍՍԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ի Է .

25 ՅՈՒՆԻՍ 1871

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — Բ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԷՖ. (Ա. ժամանակեայ կարգեայ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացումն նորընտիր Երեւոյսանաց :
2. Վերաքննութիւն Սահմանադրութեան . — Գլուխ Ա :
3. Համարատուութիւն Ազգ. վարչութեան :
4. Հրատարական Ազգ. վարչութեան Փաղ. Ժողովոյ :

Ժամը 7 հասած և Ատենապետ էֆ. ներէն և ոչ մէկն ևկած ըլլալով՝ երկրացոյն Երեւոյսան Ղազարոսեան ֆ. էֆ. հրաւիրուեցաւ առ ժամանակեայ կերպով Ատենապետի աթոռն անցնիլ, որ ատենը բացաւ ժամ 7 1/4 ին ՚ի ներկայութեան 45 Երեւոյսանաց, որոց թիւը հետզհետէ բազմանալով 57 ի յանգեցաւ :

Ատենադպիր էֆ. խօսք առաւ Գիւանին ընդունած զանազան գրութիւնները Ժողովոյ ներկայացնելու համար :

ԱՏԵՆԱՊԵՏԻ ԷՖ. — Բ. Պէնիլեան և Հ. Շամբեան էֆ. իները յատուկ գրութեամբ ծանուցած են թէ՛ հիւանդութեան սրտճառաւ չեն կարող այսօրեայ նիստին ներկայ գտնուիլ, նմանապէս Ս. Աղարէկեան էֆ. ի ալ հիւանդ ըլլալուն լուրը տրուած է Գիւանին :

Բ. Տամատեան էֆ. նամակ մ'ուղղած է, որով կը յայտնէ թէ այսօր ստիպողական հարկով մը Ժողովէն բացակայ սխտի մնայ, և թէ պատրաստուած ըլլալով մտ օրերու մէջ ճամբորդել՝ մինչեւ իւր վերադարձը գումարելի նիստերուն չը սխտի կարենայ ներկայ գտնուիլ :

— Այս նամակին երկրորդ մասը միայն Ժողովոյ նկատողութեան ենթակայ է և Գիւանը կը նշանակէ զայն :

Գրութիւն մ'ալ Այվատեան Մատթէոս էֆ. էն ընդունած է Գիւանը, որուն ահաւասիկ առաջին սարբերութիւնը :

«Պատկաւելի Ժողովոյդ այս աւուր նիստին չը կրնալով ներկայ գտնուիլ, Ազգ. Սահմանադրութեան վերաքննութեան մասին՝ այս աւուր խնդրոյն վրայ իմ կարծիքս գրովս կը հարգեմ» :

Ինչպէս այս սարբերութենէն իմացուեցաւ Այվատեան էֆ. ի գրութիւնը Սահմանադրութեան վերաքննութեան կը վերաբերի, ուստի և այն խնդրոյն ձեռք առնուած միջոցին հարկ կ'ըլլայ ընթեանուլ :

Ատենադպիր էֆ. ի այս տեղեկութիւնները Ժողովին հաղորդելէն յետոյ, Ատենապետ էֆ. նախընթաց ԻԶ. նիստի ատենադրութիւնը Ժողովոյն դիտողութեանը ենթարկեց, վաւերացումը մեծազոյն մասի ներկայութեան ստանալով թէութեամբ :

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ինչ որ անցեալ նիստին ասացի, նոյնը կը կրկնեմ և այժմ: Գիւանը փոխանակ իր ոճով խմբագրելու իմ բանաստեղծութիւն: պէտք է իմ լեզուին ու ոճոյն ուղղել, անյեղի սրահելու համար զանոնք արձանագրութեան մէջ: Իմ ատենաստեղծութիւն մէկ կողմէ ճշգրտութիւն ունի, իսկ միւս կողմէ չ'ունի, իմաստներ կան այլայլեալ, կէտեր և ստորակէտեր կան փոփոխեալ. երբ մի ստորակէտ անգամ փոփոխի, կրնայ բանաստեղծեան իմաստը ծամածուրկ կամ խախտ կորնչի: Ամեն նիստի այս պիտի լինի իմ բողոք թէ՛ Գիւանը պէտք է որ՝ բանաստեղծեանց լիկ իմաստին յենելով՝ իր սովորական ոճով խմբագրէ ատենարանից ասածներն, այլ պէտք է որ իւրաքանչիւր ատենարանի լեզուի ոճն ու հանգամանքներն անփոփոխ սրահէ արձանագրութեան մէջ:

(Գծգոհ միտումներ):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ խնամտի փոփոխութիւն մը կրած է ձեր բանաստեղծութիւնը կամ երբէք այլ իմաստ արձանագրուած՝ իրաւունք ունիք զայն ուղղել հիմայ, մինչդեռ ատենագրութիւնը վաւերացման ներկայացուած է արդէն, բայց ոչ երբէք բողոքել բնաւ թէ Գիւանը հոգ չէ տարած ձեր ոճոյն ճշգրտութիւնը սրահելու և ձեր լեզուին ձեռն անփոփոխ արձանագրելու, զիտնալով որ սղագրութեամբ անգամ չըսեմ անկարելի՝ այլ խիստ դժուարին է ատենարանի մը լեզուին ամեն հանգամանքներն ճշգրտ սրահել:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Իմ խօսքս ատենագրութեան վրայ չէ, այլ եղած և ըլլալիք բողոքներուն վրայ է: Մարկոս ԷՖ. ի ըսուած էր յառաջագոյն որ եթէ իր ատենաստեղծութեան մէջ իմաստի սխալ մը գիտէ, միայն անոր վրայ հիմնէ իր գիտողութիւններն, և ոչ բառերու և կէտերու վրայ բծախնդրութեանց երևի, որ անպատեհ է, քանի որ Գիւանը սղագրութեան եղանակ մը չունի առ ձեռն: Հետեւապէս Մարկոս ԷՖ. ատենագրութեան ոճոյն դէմ ամեն նիստի բողոք բառեալ ուղղելով՝ խորովը ժամանակաձառ ընելէ ուրիշ բանի ծառայած չըլլար:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Կը բողոքեմ այն ամեն երեսփոխանաց դէմ, որք լուսնել կուղեն զիս տրտունջ բառնալով իմ գիտողութեան դէմ, մինչդեռ ոչ որ իրաւունք ունի իմ գիտողութիւնն արգիլելու: Քանի որ իմ ատենաստեղծութեանց մէջ իմ ոճն ու լեզուն սրահ-

ուած չը լինի, ևս շարունակ պիտի բողոքեմ: Իմ բծախնդրութիւնը բառերու և կէտերու վրայ հիմնել նկատող երեսփոխանք՝ լաւ կը լինի եթէ միանգամ ուղեն գիտնալ թէ երբ բառեր կը փոխուին, կը փոխուի նաև խօսքին իմաստը, և երբ կէտեր ու ստորակէտեր կը յեղաշրջուին, խօսքը տարբեր ձև մը կառնու և իր իմաստը կը կորսնցնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախընթաց նիստին՝ Աղարէկեան Մ. ԷՖ. ատենագրութեան խմբագրութեան ոճոյն վրայ գիտողութիւն ըրաւ, և ես իրրեւ Ատենագրութիւնը պատասխանեցի՝ ի՞նչ որ իրաւացի էր և ինչ որ պէտք էր պատասխանելու: Մարկոս ԷՖ. մի և նոյն գիտողութիւնը կը կրկնէ այսօր, ուստի ես ալ մի և նոյն պատասխանէն ուրիշ պատասխան չունիմ:

Իւրաքանչիւր ատենարանի լեզուն ու ոճը ատենագրութեանց մէջ սրահելու խնդիրը շատ անգամներ յուզուեցաւ, և Գիւանն ամենէն առաջ փախաբող դտնուեցաւ ատենաստեղծութիւններն իրենց բոլոր հանգամանքներով անփոփոխ աւանդելու, բայց առանց սղագրութեան կարելի չէր, և ամեն որ գիտէ թէ սղագրութիւնը մեր գիւաններու մէջ դեռ ևս մուտ դտած չէ: Արդի ատենագրութիւնը սրահապէս խմբագրութեամբ կը սրատրաստուին, և Գիւանն ամեն կարելի աշխատութիւն և խնամ չը խնայելով՝ ինչպէս փորձը կըցուցնէ՝ յաջողած է Երեսփ. ԷՖ. ներուն խօսից իմաստն ու շարքը սրահելու և այսնը կատարմբ կատարեալ արձանագրութիւն երեան հանել: Գիւանն այսչափը կըցած է ընել, և այսօր չափ միայն կրնայ ընել կարելի չէ իրեն համար իր ոճը թողուլ և այս ու այն երեսփոխանին լեզուին ու ոճոյն վրայ ձեւել ատենագրութիւնը: Բայց եթէ կուզէ Աղարէկեան ԷՖ. որ ատենաստեղծեանց բառ առ բառ և կէտ առ կէտ անփոփոխ սրահուելուն համար սղագրութիւն մը հնարելու միջոցներ խորհի խորհի, փոխանակ ամեն նիստի բողոք բառնալ ու խոսելով՝ թող իր յարուցած խնդրոյն անհրաժեշտ կարևորութիւնն զգացնէ խորհուրդն և զայն խնդրոց կարգն անցնել տայ:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊԱ. — Աղարէկեան ԷՖ. ի գիտողութիւնը կրկնելով՝ կը խնդրեմ որ Գիւանը կարելի եղածին չափ ջանադիր գտնուի իւրաքանչիւր երեսփոխանի լեզուին հանգամանքներն և ատենաստեղծութեան ոճն անյեղի սրահելու, որով թէ ատենարան ԷՖ. ներուն արժէքն յերեան կուզայ, և թէ Գիւանը զերծ կը մնայ

այսպիսի ծանր ու դժար խմբագրութեան մը աշխատութեանէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չը կըցի հասկնալ թէ ինչ կը նշանակէր երեսփոխ Արքայանի խօսքին վերջին մասը. իսկ առաջին մասին՝ ի պատասխան՝ վերջին անգամու համար կ'ըսեմ թէ՛ ևս չեմ կրնար ինչպէս միւս երեսփոխանաց նոյնպէս և Աղարէկեան ԷՖ. ի լեզուաբանական հանգամանաց ոճոյն և ձևին ճշգրիտ տիպարուն ձուլել ատենագրութեան խմբագրութիւնը, մինչդեռ Գիւանը սղագրութեան եղանակ մը չունի ատենարանութիւններն բառ առ բառ արձանագրելու համար. մանաւանդ թէ չեմ կրնար ինքզինքս կարող ենթադրել չը հասկըցած ոճն ու լեզուն ըմբռնելու և ի գիր առնելու:

Նախընթաց նիստի ատենագրութեան վրայ ուրիշ ոչ որ գիտողութիւն կ'ընէ, հետեւապէս Ատենագրութիւնը վաւերացում մը մեծագոյն մասի դոյացման թողուլ կ'անցնի օրուան խընդրոց կարգին:

1. ՎԱԻԵՐԱՑՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ընդհանուր խորհուրդ վերանորոգման Գործադիր Յանձնաժողովը վերջին անգամ կատարուած եկեղեցական վեց երեսփոխանաց նորոգ ընտրութեանց վրայ՝ տեղեկագիր մը մատուցած էր, առ Արքայան Նախագահն ուղղեալ:

Ատենագրութիւնը նոյն տեղեկագիրը խորհուրդին ներկայացուց և յատենի ընթերցաւ, որոյ աւաստիկ ճշգրիտ պատճէնը:

Ամենապատիւ Արքայան Հայր,

Նախագահ Աղղ. Ընդհ. խորհուրդ:

Պակասած վեց եկեղեցական երեսփոխանաց տեղ նորոգ ընտրութիւնը կատարուեցաւ, յուլիս 12 երկու շաբթի օրն՝ ի Պատրիարքարան: Մայրաքաղաքի բոլոր եկեղեցականք հրաւիրեալ ըլլալով՝ ի Գումրիայում ի Պատրիարքարան, նոյն օրը քսան և հինգ եկեղեցականք միայն անձամբ ներկայ գտնուելու և վեց եկեղեցականք ալ իրենց քուէարկութեամբ կարգու են 51:

Առաջին քուէարկութեամբ բացարձակ առաւելութիւն ստացեր են,

- Ամեն. Տ. Արիստակէս Արքեպիսկոպոս քուէ 28
- Արժ. Տ. Մանթէոս Վրդ. Իշփրլեան 25
- Արժ. Տ. Ղեւոնդ Վրդ. Փիրղալմեան 21

Նոյն օրը համեմատական քուէարկութիւնն ալ կատարուելու և հետեւեալ արդիւնքն ունեցեր է:

- Արժ. Տ. Խաչատուր քուէ. Տ. Գարրիէլեան քուէ 21
- Արժ. Տ. Խորէն Վրդ. Կիրոյեան 14
- Արժ. Տ. Խորէն քուէ. Փէհլիվանեան 15

Համագումար խորհուրդի Գիւանն այս արդիւնքը իր տեղեկագրովը հաղորդած ըլլալով մեզ, կը փութամբ սրատեսակի խորհուրդը ներկայացընել ի վաւերացումն:

Մնամք . . .
25 Յուլիս 1871

Արեւադպիր Վասն ասեղապետի
Ս. ՉԱԲԱՅՅԱՆ Գ. ՂԱՅՐՈՍՅԱՆ

Այս տեղեկագրին ընթերցումէն ետեւ՝ Ատենագրութիւնը ԷՖ. զայն խորհուրդին գիտողութեան կենթարկէ, սակայն ոչ որ այս մասին գիտողութիւն կը յայտնէ. հետեւապէս Ատենագրութիւնը խորհուրդին փութամբ մատուցանելով որ՝ դեռ մեծագոյն մաս կազմուած չըլլալուն համար՝ չեն կրնար ընտրութիւնները վաւերանալ, առ կախ կը թողու խնդիրն և կ'անցնի Սահմանագրութեան վերաբնութեան:

2. ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԹ Ա.

Ատենագրութիւնը կը հրաւիրէ երեսփոխան ԷՖ. ներք Սահմանագրութեան առաջին գլխոյն վրայ իրենց գիտողութիւններն մէջ բերելու:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ի սկզբան խնդրոց կարգին մէջ Սահմանագրութեան վերաբնութեան խնդրէն առաջ Քաղաքական խորհուրդ հրաժարակամին խնդիրը կերեւէր՝ այս դասակարգութիւնը փոփոխուած է և հրաժարակամի խնդիրն ետ թողուած. ո՞վ ըրաւ այս փոփոխութիւնը և ինչ պատճառաւ: Գիւանն իրաւունք չունէր առանց խորհուրդին հաւանութեան այսպիսի փոփոխութիւն մը ընելու, որով մէկ կողմէ գործիք եղած կըլլայ այն կուսակցութեան ձեռքը՝ որ Քաղաքական խորհուրդ հրաժարակամը մինչեւ վերաբնութեան ցաւարտ երկարելու զեր ու չը յաջողեցաւ, և միւս կողմէն՝ խնդրոց կարգն որովեւ իրաւունքը կերպով մը խորհուրդ ձեռքէն յափշտակած կըլլայ:

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Նախ կուզեմ գիտնալ թէ Ժողովն ընդունած է Օգոստին Էֆ. ի յարուցած խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսք կուզէ Օգոստին Էֆ. իր միջանկեալ կերպով յարուցած խնդրոյն վրայ խօսելու : Բայց որովհետև իր գիտողութիւնները Սահմանադրութեան վերաբնութիւնը չեն շօշափեր , չեմ կրնար խօսք տալ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իրաւունք չունիք Ատենապետ Էֆ. դիտ խօսելէ արդիւիւր : Ո՞վ ըսաւ որ Ժողովոյ մէջ խնդրոց կարգին վրայ գիտողութիւններ չեն կրնար ըլլալ , և ո՞վ արդիւց որ ժողովական մը խնդրոց կարգը փոփոխելու առաջարկութիւն չը կրնայ ընել Գիւանին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդ՝ Ժողովոյն կը հարցընեմ թէ Օգոստին Էֆ. ի յարուցած միջանկեալ խնդրոյն վրայ խօսք տա՞նք ատենարան Էֆ. ներսուն՝ թէ վերաբնութեան խնդրով զբաղինք :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՉԱՆ — Վերաբնութեան խնդրոյն Քաղ. Ժողովոյ հրատարականի խնդրէն նախադաս դրուած ըլլալէն պէտք չէ հետևցնել թէ՛ Քաղ. Ժողովն իր համարատուութիւնը երկարաձգելու միտում ունեցած ըլլայ : Թերևս համարատուութեան տեղեկագրին պատրաստ չ'ըլլալէն յառաջ եկած ըլլայ խնդրոց կարգին անփոփոխ մնալն , բայց երբ Քաղ. Ժողովն իր համարատուութեան տեղեկագրին տպագրութիւնն աւարտէ , այն ատեն խնդրոց կարգը փոփոխութիւն կը կրէ : և այն ատեն կը խօսուի նոյն խնդրոյն վրայ :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Եթէ Օգոստին Էֆ. ի խօսքը պիտի արձանագրուի , յանուն Գիւանի ես ալ խօսք ունիմ :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ժողովոյ մէջ եղած որ և է գիտողութիւններ արձանագրուելու են :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Արդարեւ Նախագահի տուած բացատրութեան վրայ , քիչ մ'առաջ ըրած խօսքս ետ կառնում :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ. — Բոլոր ուժովս կը բողոքեմ Օգոստին Էֆ. ի այն անարկութեան դէմ՝ թէ Գիւանը գործիք եղած ըլլայ որ և է կուսակցութեան : Գիւանն այնպէս գիտէ թէ՛ Ժողովը կարող է միշտ խնդրոց կարգին մէջ գտնուող խնդիրներէն ուղածը ձեռք առնուլ , առանց անոր դասակարգութեան ուղղնելու : Գիւանն և ոչ մի առթիւ այս կամ այն կուսակցութեան հետեւած է և անոր հաճելի կերպով խնդրոց կարգ պատրաստած , այլ նկատելով որ Քաղաքական Ժողովոյ համարատուութեան տեղեկա-

գիրը դեռ ևս իրեն չէ հաղորդուած տպագիր՝ խնդրոց կարգը նոյնը պահելու հարկադրուած էր :

Այս միջանկեալ կարճեաց շարայարութեամբ չուզելով վիճարանութիւնը երկարել , Ատենապետ Էֆ. ըստ սովորականին կ'սխի առենական ընթացքը շարունակել , և Սահմանադրութեան վերաբնութեան մասին Այվատեան Էֆ. ի ուղարկած գրաւոր գիտողութիւնը յատենի կարգաւ համար Ժողովոյ հաւանութեանը կը դիմէ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կառաջարկեմ որ Այվատեան Էֆ. ի գիտողութիւնը կարդացուի :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Կարճեմ թէ ներկայ չեղող երեսփոխանի մը գրաւոր գիտողութիւնն ընթեռնուլ՝ սա անսպասելիութիւնն ունի որ , երբ ընդդիմախօսներ երևան գան՝ գիտողութեան հեղինակն ինք ներկայ չէ որ անձամբ պատասխանէ :

ՔԻԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ. — Գիւանին պարտքն է իրեն ուղղեալ որ և է գրութիւն յատենի աստ ընթեռնուլ :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Երեսփոխան մը եթէ չը կրնայ անձամբ ներկայ գտնուիլ Ժողովոյն և իր գիտողութիւնը բանաւոր կերպիւ յայտնել , իրաւունք ունի խնդրոց կարգն եղող խնդրոյ մը վրայ իր կարծիքը յայտնել գրաւորապէս :

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Այն երեսփոխանը՝ որ առանց ճանապարհորդութեան և կամ հիւանդութեան պատճառի բացակայ գտնուած է Ժողովէն , ինչ գիտողութիւն ալ որ ըրած ըլլայ գրաւորապէս , չը կրնար ընդունուիլ :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Հոս ո՛չ լսարան է և ոչ ալ մենք բացակայ երեսփոխանաց գրած ճառերը մտիկ ընելու համար հոս խմբուած եմք . ես չեմ կրնար ընդունիլ այն ամեն գիտողութիւններն որք բացակայ երեսփոխանէ մը գրաւոր կերպիւ հաղորդուած են Գիւանին , մանաւանդ թէ՛ այս կերպ գիտողութեանց կարեւորութիւնն ընծայելն՝ տեղի տալ է երեսփոխանաց , որ տունը նստելով ճառեր խմբադրեն և հաղորդեն Գիւանին , առանց Ժողովոյ ներկայանալու :

Այս տարածայն գիտողութեանց առջեւ՝ Ատենապետ Էֆ. մեծագոյն մասին ներկայութեան կը վերապահէ խնդիրը և խօսից կարգին համեմատ խօսք հուտայ երեսփոխանաց՝ իրենց գիտողութիւններն ընելու Սահմանադրութեան վերաբնութեան մասին :

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՎՐԳ. — Սահմանադրութեան Ա. գլխոյն և Ա. յօդուածոյն մէջ գրուած թէ՛

« Կ. Պօլսոյ Պատրիարքը բոլոր ազգային ժողովոց նախագահն է » . այս ինչպէս կրնայ ըլլալ , քանի որ Ազգն ամեն ուրեք թէ գաւառներու և թէ նոյն իսկ Պօլսոյ մէջ շատ ժողովներ կ'ընայ ունենալ . Ս. Պատրիարքը այդ ժողովոց ո՞ր մէկին պիտի կրնայ ժամանել . թողունք այ՛ր արդէն առ ձեռն եղած Ազգ . Սահմանադրութեան 94-րդ. յօդուածը՝ որ գաւառական վարչութեան վրայ կը խօսի՝ կ'ըսէ թէ՛ « առաջնորդը գաւառական ժողովոց նախագահն է » . ուրիշ կը հետեւի ըսել թէ՛ ինչպէս որ Ս. Պատրիարքը Կ. Պօլսոյ մէջ նախագահելու իրաւունքն ունի , նոյն և Յարութիւն Եպիսկոպոսն Կարնոյ և Մկրտիչ Եպիսկոպոսը՝ Բերկոյ մէջ : Գուցէ ասոր դէմ ստարկուի թէ՛ գաւառներու մէջ փոխառաջնորդք ալ կան որ՝ Ս. Պատրիարքի իրր ներկայացուցիչը՝ փոխանորդութեամբ կը վարեն իրենց պաշտօնը . իրաւ այդպէս , բայց այդ սովորութիւնը վերջին տարիներս տեղի ունեցած է իստան Ժողովոյ որոշմամբն , որպէս զի առաջնորդական հրովարտակաց ծախքերը պակաս ըլլան . ուստի այս կէտն որոշելու համար ալ աւելի աղէկ կ'ըլլայ՝ ըստ իմ կարծեաց՝ եթէ ըսուի , « Կ. Պօլսոյ Պատրիարքը կեդրոնական վարչութեան նախագահն է » :

Բ. Անկէ ետքը կը յաւելու թէ՛ « և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ » . հոս անորոշ և սեղմեալ վիճակի մը մէջ կը գտնուի պատրիարքական իշխանութիւնը . եթէ պաշտօնի վերայ կը խօսի , որոշած չէ թէ՛ ինչ է Պատրիարքի պաշտօնը , ինչ սահման ունի և կամ ինչ իրաւասութեան տէր է . որոշելու համար աղէկ կ'ըլլայ եթէ ըսուի , « Պատրիարքը կեդրոնական վարչութեան պաշտօնական և լիազօր ներկայացուցիչն է և անոր գործադիր իշխանութեան վարիչն է » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Տ. Հմայեակ վարդապետի գիտողութեան մեծ մասն անցեալ նիստին մէջ ուրիշ երեսփոխաններ ըրած են . կը խնդրեմ իրմէ որ փոխանակ զանոնք կրկնելու՝ համառօտիւ յայտնէ թէ՛ ո՞ր կարճեաց համամիտ կը գտնուի ինքն :

Տ. ՀՄԱՅԵԱԿ ՎՐԳ. — (Շարունակելով) Գ. Գարձեալ նոյն յօդուածը քիչ մը վարը կը տրամադրէ որ . « Պատրիարքական ընտրելին ի վաղուց անտի պատրիարքութեան յատկացեալ և Եպիսկոպոսաց դասէն ըլլայ » . ես այս խնդիրը

չը հասկցայ , ինչ և ո՞ր դասն է որ կը յատկացընէ առանց բացայայտի . և չեմ գիտեր ինչ նշանակութիւն ունին « ի վաղուց անտի » բառերը . մի՛ գուցէ Գրիգորի , Ներսիսի , Սահակայ և Մեսրոպայ սերունդէն ըլլալ նշանակէ , բայց այն Արշակունի սերունդէն արդէն սպասած է . գաղտնիք մը կայ հոս որ չը գորէր միտքս խմանալ , անպատճառ եպիսկոպոս ըլլալու է պատրիարքական ընտրելին . — չը կըրնա՞ր ըլլալ որ սարկաւազ մը կամ վարդապետ մը Պատրիարք ընտրուի . ուստի այս կէտին մէջ համակարծիք կը գտնուիմ Օգոստին Էֆ. ի անցեալ նիստին մէջ ըսածին թէ՛ « պատրիարքական ընտրելին Հայաստանեայց եկեղեցւոյ կուսակցութեան դասէն լինի » , ուր ամեն աստիճանի եղողները կ'ամերիտիւնին , հոգ չ'է որ Եպիսկոպոս ըլլայ կամ չ'ըլլայ , միայն թէ՛ իր ամեն ձիրքովն և զործունէութեամբն արժանաւոր եղած ըլլայ նոյն բարձր պաշտօնի կոչման :

Գ. Անկէ վար կը յաւելու թէ՛ « միանգամայն Տէրութեան կատարեալ փոխադրութեանն արժանաւոր » : Հոյ ազգը 400 և այսչափ տարիներէ ՚ի վեր իր հաւատարիմ ծառայութեամբը , խոնարհ և անըմբոստ հպատակութեամբը Տէրութեան ծայրագոյն փոխադրութեան և համարման արժանացած է և փորձով իսկ շատ պարագաներու մէջ ցոյց տուած է իր հաւատարմութիւնը . ուստի ինչ հարկ կայ այս կէտը Սահմանադրութեան մէջ տեսնել , քանի որ մտքերնուս և սրտերնուս մէջն անդամ ծնունդ առած չ'է այդ տեսակ տարօրինակ բան մը . իր թէ մենք մեր մէջը Տէրութեան անխտահալի մարդեր ալ ունինք եղեր , մանաւանդ կղերականներ ալ . ասկէ այս կը հասկցուի . եթէ ոչ՝ քանի որ Ազգն իր ընտրածին վրայ վստահ է և Տէրութիւնն ալ Ազգին վրայ վստահ , ալ ինչ բան կը մնայ մէջ տեղն անխտահալի . արդէն Հայաստանեայց եկեղեցին հպատակութիւն կը քարոզէ թագաւորաց և իշխանաց , ուստի աւելորդ կը համարիմ ես այս կէտը , քանի որ տեղի չունի : Ահաւասիկ ասոնք են իմ գիտողութիւններս : Տէրութեան հպատակութեան խընդիրն ալ արդէն ինքնին լուծուած կը համարիմ , եթէ « Օսմանեան հպատակ ըլլայ ըսուի ՚ի հօրէն սկսեալ » բառերը վերցնելով : Տարիքի համար բնաւ խօսք չ'ունիմ . քանի տարու կ'ուզէ ըլլայ , պէտք եղած բանը կատարելութիւնն է միայն :

ՔԻԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ. — Կ. Պօլսոյ Պատ-

րիարքն ազգ. բոլոր ժողովոց նախագահ կրնայ ըլլալ :

ՊԵՆՏԱՆ Թ. ԷՖ. — Անցեալ նիստի մէջ բաւական խօսուեցաւ այս խնդրոյն վրայ . արդ՝ ժամ է վախճան տալ վիճարանութեան՝ Պատրիարքի պաշտօնին , ընտրութեան և հրատարման խնդրոյն եզրակացութիւնը՝ եթէ արժան դատուի՝ հետեւեալ առաջարկութեանս վրայ հիմնելով :

ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՕԼՍՈՅ

ՊԱՇՏՅՈՒՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԱՃԱՐՈՒՄ

«ՅՕԴ. 1. Կ. Պօլսոյ Պատրիարքն ազգային Կեդր. Վարչութեան ժողովոց նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ , և Բ. Գրան Ազգին հետ ունեցած փոխադարձ յարաբերութեանց միջնորդն է :

«Պատրիարք ընտրուելու անձը՝ պէտք է որ Արարատեան Մայր Աթոռէն ձեռնադրեալ կամ անկէ ընդունուած Եպիսկոպոս մ' ըլլայ , և Սահմանադրութեան (. .) յօդուածոյն համեմատ ընտրելութեան հանգամանքներն ունենայ . սակայն Եպիսկոպոսութեան աստիճանին զեւ չը հասած կուսակրօն մ' ալ կրնայ Պատրիարք ընտրուիլ , անմիջապէս Ս. Էջմիածին զրկուելով Եպիսկոպոս ձեռնադրուելու սպասմանս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյ ուղարկութիւնը կը հրաւիրեմ Պէկեան էֆ. Ի առաջարկութեան վրայ :

ՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. — Պէտք չէ՞ որ Պատրիարքն ստիպողական հարկի մ' առջեւ՝ առանց ժողովոյ որոշման՝ որ և է տնօրէնութիւն մ' ընելու իրաւասութիւն ունենայ :

ՊԵՆՏԱՆ Թ. ԷՖ. — Արագան Պատրիարքն՝ առանց ժողովոց կարծեաց դիմելու՝ կրնայ իւրովի գործել , պատասխանատուութիւնն իրեն վերապահելով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը Պատրիարքի պաշտօնին վրայ չէ՞՝ այլ ընտրութեան , ուստի հարկ է թողուլ պաշտօնը և ընտրութեան եզրանակին դառնալ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Պատրիարքն՝ ինչպէս գիտեմք՝ անկախ իշխանութիւն մը չէ՞ , այլ վերին իշխանութիւն մը . հետեւապէս բաւական չէ՞ ըսել միայն թէ՞՝ Արարատեան Մայր Աթոռէն ձեռնադրեալ կամ անկէ վկայեալ Եպիսկոպոս մ' ըլլայ , այլ ըստ Սահմանադրու-

թեան տրամադրութեան ինչպէս իր Ազգին և Տէրութեան՝ անանկ ալ իրմէ վերագոյն իշխանութեան հետ կասուած ըլլայ : Աւստի կ'առաջարկեմ որ «Կ. Պօլսոյ Պատրիարքը Օսմանցի Հայոց պաշտօնական հոգեւոր պետն է , իրրեւ ներկայացուցիչ կաթողիկոսին ամենայն Հայոց՝ խօսքն ալ աւելնայ Պէկեան էֆ. Ի առաջարկութեան վրայ , որով Պատրիարքին քաղաքական պաշտօնին հետ կրօնական պաշտօնն ալ բացատրուած կ'ըլլայ :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Կարծեմ թէ աւելի ազէ կ'ըլլայ եթէ Էջմիածնայ կաթողիկոսին հոգեւոր պետ ընդհանուր Հայոց՝ տիտղոս տրուի , և Կ. Պօլսոյ Պատրիարքին ուրիշ տիտղոս մը՝ ի նորոյ սահմանուի , վասն զի Կ. Պօլսոյ Պատրիարքին հոգեւոր պետ ըսելը՝ կ'ենթադրէ թէ կաթողիկոսն ընդհանուր Հայոց հոգեւոր պետն է :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Խիստ պիտի երկարի Սահմանադրութեան վերաբնութիւնը , եթէ այսպէս բառերու և խմբագրութեան վրայ որոճաւք . լաւ եւս կը լինի , եթէ մեր ուղարկութիւնը դարձնենք միայն այն կէտերուն վրայ՝ որոց գործադրութիւնն արդարեւ դժուար եղած է և հետեւապէս զՍահմանադրութիւն յանդորդութիւն դատապարտած : Իսկ գալով Պատրիարքի ընտրութեան խնդրոյն վրայ եղած առաջարկութեանց , դիտողութեան արժանի կը գտնեմ սա կէտը թէ՞՝ «Պատրիարք ընտրուելու անձը պէտք է որ Արարատեան Մայր Աթոռէն ձեռնադրեալ Եպիսկոպոս մ' ըլլայ» , որով պատրիարքութեան զրկեալ կը հրատարակուին վարդապետներն՝ Եպիսկոպոս չ'ըլլալուն պատճառաւ , թէ եւ Պատրիարք ըլլալու արժանիքն ալ ունեցած ըլլան . որ ուղղակի զրկեմք մ' ընել է սրբակրօն դասին :

ՊԵՆՏԱՆ Թ. ԷՖ. — Կը ցաւիմ որ Քօլօբան էֆ. կը կարծէ թէ եղած վիճարանութիւնը խղճազրութեան վրայ է , մինչդեռ սկզբանց վրայ է՝ որք Ազգին համար կենսական են . ուստի հարկ չեմ տեսներ ասկէ աւելի պատասխանել իրեն : Բայց Օգոսէն էֆ. կարեւոր դիտողութիւն մը կ'ընէ թէ՞՝ Պատրիարքին քաղաքական պաշտօնը բացատրուած՝ իսկ կրօնական պաշտօնը չէ՞ բացատրուած իմ առաջարկութեանս մէջ , և թէ պէտք է աւելցնել որ «Կ. Պօլսոյ Պատրիարքն Օսմանցի Հայոց պաշտօնական հոգեւոր պետն է , իրրեւ ներկայացուցիչ կաթողիկոսին ամենայն Հայոց» , ինչպէս գրուած

է Սահմանադրութեան նախորդ վերաբնութեան Յանձնաժողովոյ Ծրագրին մէջ :

Արդարեւ ես ալ այս պարբերութիւնը կարգացի Ծրագրին մէջ և ես ալ ուղեցի Պատրիարքին կրօնական հեղինակութեան սահման մը տալ , բայց չը կարողացայ . ուստի թողուցի որ այս սահմանը Ընդհ. Ժողովը տայ իր խնամտութեամբը՝ եթէ հարկ դատէ : Գործադրութեան մէջ գտնուած Սահմանադրութեան օրէնադրուները քօլի տակ ձգած էին այդ կէտը , ես ալ ուղեցի անոնց հետեւիլ . բայց որովհետեւ Օգոսէն էֆ. ուղեց այդ քօղը բանալ , կը պարտաւորիմ բացորոշ իմ համազումս յայտնել :

Կարդացի Ծրագրին այդ պարբերութիւնը , բայց խորչեցայ . սոսկացի երբ այդ տողերը կարդացի . սոսկացի այո՛ , որովհետեւ Կ. Պօլսոյ Պատրիարքն Օսմանցի Հայոց պաշտօնական հոգեւոր պետն է , և ո՛չ ալ ամենայն Հայոց կաթողիկոսին ներկայացուցիչն է . որովհետեւ՝ Օսմանցի Հայոց , ինչպէս ամենայն Հայոց հոգեւոր պետը Արարատեան Մայր Աթոռոյ վահախառ կաթողիկոսն է միայն : Կ. Պօլսոյ Պատրիարքը հոգեւոր պետ ճանաչել՝ անը կաթողիկոսութեան հեղինակութիւն տալ է , հետեւաւարար եկեղեցւոյ օրինաց դէմ մեղանշել է , որուն համար իրաւամբ ըսի թէ , «երբ կարդացի այդ տողերը՝ խորչեցայ ու սոսկացի» : Կ. Պօլսոյ Պատրիարքին կրօնական աստիճանն ու պաշտօնը համազօր է Եպիսկոպոսի մը՝ ստիճանին ու պաշտաման , և սպացոյցն ալ այն է որ՝ երբ Պատրիարք մը կ'ըլլայ պաշտօնէն , կը հաւասարի վերասին սոսկ Եպիսկոպոսի մը :

Կ. Պօլսոյ Պատրիարքը՝ ո՛չ ալ ամենայն Հայոց կաթողիկոսին ներկայացուցիչն է ըսի և արդարեւ այնպէս է . ստոյգ է որ մի քանի տարի առաջ՝ քաղաքական ծանրակշիռ պարագայի մը նկատողութեամբ՝ երեւելի քաղաքադէտ մը պաշտօնական բանակցութեան մէջ մէջ՝ Կ. Պօլսոյ Պատրիարքը ամենայն Հայոց կաթողիկոսին ներկայացուցիչը համարեց , բայց արժան է գիտնալ թէ՞՝ Ազգը պաշտօնապէս ոչ մինչեւ այն տունն և ոչ ալ մինչեւ հիմայ այդ ընդունած է : Իւ արդարեւ ինչպէս հնար է Կ. Պօլսոյ Պատրիարքը ներկայացուցիչ համարիլ ամենայն Հայոց կաթողիկոսին , առանց անոր ընտրութեանը մէջ Նորին Վահախառութեան հաւանութիւնն ստանալու : Կրնաք մտաբերել , Երեսփոխան էֆ. ներ , թէ Ընդհ. Ժողովոյ յանուն Ազգին պաշտօնապէս այդպիսի բան մ' ընդու-

նելը՝ ո՛րչափ մեասակար կրնայ ըլլալ Ազգին օգտին , եկեղեցւոյ շահուն հակառակ ըլլալով . այսպիսի բան մը՝ որ մինչեւ հիմայ պաշտօնապէս չէ ընդունուած՝ մեր վերաքննեալ Ազգ. Սահմանադրութեան մէջ զետեղելը՝ սպառաշին դռները գոցել է . ո՛վ գիտէ , գուցէ որ մը ամենայն Հայոց կաթողիկոսն՝ ընդհանուր Հայոց վրայ ունեցած իր կրօնական անրոնաբարելի իրաւասութիւնը անթերի գործադրելու տրամադիր հանդիսանալով՝ իր օրինաւոր ներկայացուցիչը ունենալ ուղէ . խղճի մտօք խորհեցէք , Երեսփոխան էֆ. ներ , կարո՞ղ եմք Ընդհանրական կաթողիկոսին այդ իրաւունքը՝ որուն գործադրութեան պարագաներն ու քաղաքական նկատողութիւններն առ այժմ արգելք եղած են՝ այսօր խաղառ մերժել . ես բացարձակապէս կ'ըսեմ թէ՞՝ ոչ , և եզրակացընելով ըսածներս խղճի մտօք կ'ըսեմ թէ՞՝ Ընդհ. Ժողովն չէ կարող Կ. Պօլսոյ Պատրիարքը ոչ բոլոր Օսմանցի Հայոց հոգեւոր պետ ճանաչել ու հրատարակել և ոչ ալ ամենայն Հայոց կաթողիկոսին օրինաւոր ներկայացուցիչ :

ՓՍՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Սահմանադրութեան Ա. յօդուածոյն վրայ բաւական խօսուեցաւ և արդարեւ պէտք էր ալ որ երկարէր , վասն զի այդ յօդուածը իր մէջ դանազան խնդիրներ կը պարունակէր , որոնց մէկ քանին արդէն համաձայնութեամբ լուծուած կը տեսնեմ և մէկ քանին դժուարութեանց հանդիպած . և ասանկ ալ պիտի ըլլար : Երեսփոխան մը տարիքի խնդրոյն վրայ կարծիք կը յայտնէ , ուրիշ մը Օսմանեան հպատակութեան վրայ , ուրիշ մը Էջմիածին ձեռնադրեալ Եպիսկոպոսութեան վրայ , մէկ ուրիշն ալ ամենուն վրայ , ինչպէս նախորդ նիստի ատենադրութիւնը կը հաստատէ ըսածներս : Ասանկ վիճակի մէջ ես չեմ կրնար գիտնալ թէ՞՝ ո՛րն է յուզեալ խնդիրը . Օսմանեան հպատակութիւնը , տարիքը , ամենայն Հայոց Հայրապետի փոխանորդութիւնը , որպէս զի անոր վրայ խօսիմ : Արդի յուզեալ խնդիրները տասնի կը հասնին և ասանկով դժուարութեանց պիտի հանդիպինք : Արդ՝ որպէս զի խնդիրներն այսպէս չը ճապաղին՝ կ'առաջարկեմ որ Ա. դիմէն սկսեալ ստորակէտէ՝ ի ստորակէտ կամ պարբերութեանէ՝ ի պարբերութիւն , այսինքն «Կ. Պօլսոյ Պատրիարքը բոլոր ազգային ժողովոց նախագահն է» հաստատածը նախ քննութեան առնուի և յետոյ երկրորդ հաստատածը , եւ այլն . Այս դիտողութիւնս ժո-

դուրջ հաւանութեանը յանձնելով, կ'առաջարկեմ նաեւ որ դժուարութեան հանդիպող խընդիրներն ալ՝ ինչպէս են փոխանորդն ըլլալուն համ չըլլալուն, էջմիածնէ ձեռնադրեալ եպիսկոպոս ըլլալուն կամ չըլլալուն, և Օսմանեան հսկատակ ըլլալուն կամ չըլլալուն խնդիրները՝ զոր աճապարանօք որոշման ենթարկելէ զդուշանալու Էնք՝ մասնախմբի մը յանձնուին, որ քննէ և ծրագրէ և ներկայացնէ Ժողովոյն:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Համամիտ եմ փափագեան էֆ. ի կարծեաց:

Այս պահուս Ատենադպիր էֆ. ներկայութեան տուժարը քննելով կը յայտնէ թէ Ժողովոյ օրինական թիւը զոյացած է արդէն. ուստի և Ատենապետ էֆ. հարկ կը համարի վերաքննութիւնը սակաւ ինչ ընդհատելով՝ Ժողովոյն որոշման ենթարկել առ կախ մնացած ներքին խնդիրներն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆԱԽԸՆԹԱՅ ՆԻՍՏԻՆ

Ատենապետ էֆ. նախընթաց ԻԶ. նիստի ատենագրութեան վրայ անգամ մ'ալ Ժողովոյ զիտողութիւնը կը հրաւիրէ:

Ժողովոյ կողմանէ զիտողութիւն չըլլալով, Ատենապետ էֆ. նախընթաց նիստի ատենագրութիւնը ընդունուած կը հրատարակէ:

ՎԱԻԵՐԱՅՈՒՄԵՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ատենապետ էֆ. քուէի կ'ենթարկէ Գործադիր Յանձնաժողովոյ նոր ընտրութեանց տեղեկագիրը:

Ժողովն առանց զիտողութեան ընդհանուր հաւանութեամբ կը վաւերացնէ անոր կողմէ ծանուցեալ եկեղեցական վեց երեսփոխանաց նորոգ ընտրութիւններն և կանցնի Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն:

ՇՕՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փափագեան էֆ. իր առաջարկութիւնը Ժողովոյ հաւանութեան յանձնած է, հետեւապէս քուէի կը դնեմ զայն:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Երեսփոխան էֆ.

ները մէկ մէկ մկրտտ առեր պատրիարքութեան հագուստ կը ձևեն. թող ներուի ուրեմն ինձ իմ հագուստի ձևն նախ ցոյց տալ, զոր ձևած է եկեղեցին:

Պատրիարքութեան բուն ոգին՝ ասկէ 400 տարի առաջ Ֆէթհի Սուլթան Մէհմէտին առ Յովակիմ Պատրիարք տուած պաշտօնի ոգին չէ, և այս պէտք չէ շփոթել Պատրիարքութեան բուն ոգւոյն հետ, որ եկեղեցիէն բղխած է և որ նուիրական է. վասն զի Պատրիարքի մը պաշտօնը սոսկ քաղաքական չէ. այլ նա կրօնական իշխանութիւն մ'ալ ունի, վերագոյն իշխանութեան իրաւասութեան ներքեւ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խիստ լաւ խօսեցաւ Սրբազան Պատրիարքն: Երեսփոխան էֆ. ներն մինչդեռ զՊատրիարքութիւն սոսկ քաղաքական մարմին մը նկատելով յառաջ կը վարեն իրենց զիտողութիւններն, պէտք է արդարեւ որ ի նկատի առնուին նաեւ թէ՛ նորա քաղաքական պաշտօնին յարակցեալ է նաեւ իր կրօնական պաշտօնը՝ զոր ոչ ոք կրնայ բաժանել: Ուստի կ'առաջարկեմ որ Պատրիարքը կրօնակապէս՝ Մայր Աթոռոյ և Ազգին մէջ միջնորդ, և քաղաքականապէս՝ Բ. Գրան առջեւ Ազգ. վարչութեան որոշմանց ներկայացուցիչ ճանչցուի: Ստորջ է որ՝ մենք մեր Պատրիարքներուն վրայ բանապակով կրօնական կերպարանք մը կապած ենք և զայն լոկ քաղաքական ներկայացուցիչ մը կը նկատեմք, ուրիշ հետեւած ցաւը՝ թէ եւ տեսանք բայց չը զգացնինք, ինչպէս է Զաւալեան Սրբազանին իրր ներկայացուցիչ կաթուղիկոսի մայրաքաղաքս գալը: Արդ՝ եթէ կայ հարկ մը որ կը պարտաւորէ զմեզ Պատրիարքութեան հանդերձ մը ձեւել, պէտք է անցեալը մեր աչքին առջեւ պատկերացնել, ինչպէս նաեւ այն ամեն շփոթութեանց պարագաներն՝ որոնք այնչափ ատեն զԱզգն յուզեցին. և այնու Պատրիարքութեան ձեւը մարմնաւորել:

ԱՂԱՅԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ես թէ պէտք մի կողմանէ իրաւունք ունիմ չըլլալու, քանի որ պէտք եղածին պէս չ'արձանագրուիր իմ բանախօսութիւն. բայց միւս կողմանէ ալ՝ իրր երեսփոխան՝ պարտաւոր լինելով իմ կարծիքն յայտնել առաջարկեալ խնդրոյ մը վրայ, հարկ կը դատիմ վերստին ձեռք առնուլ բանից թէ ինչ, գիտնալով հանդերձ որ եթէ երեսփոխան ալ չը լինէի, իրաւունք ունէի խօսելու, մինչդեռ խնդիրը կրօնական էր:

Երբ խնդիրն եկեղեցւոյ վրայ է՝ կը տեսնեմ որ Հայոց եկեղեցին մի փոքրիկ պատական եկեղեցի կը նկատուի և հոն կը յանդի վիճարանութեանց եղբակացութիւնը: Նախընթաց նիստի մէջ խօսեցայ բաւական Պատրիարքի յատկութեանց վրայ և ըսի թէ նորա հանդերձը ձեւուած է արդէն, և է նա՝ նախ իւր նախնական վիճակով՝ Արքեպիսկոպոս, Հոգևոր Տէր. երկրորդ՝ կեդրոնական վարչութեան Նախագահ, Ազգին ներկայացուցիչ՝ Տէրութեան առջեւ, ինչպէս Տէրութեան կողմէ միջնորդ՝ Ազգին առջեւ: Իսկ արդ՝ որ կ'ուզէք նորէն Պատրիարքի հանդերձ ձեւել, կ'առաջարկեմ որ նախ քան դամենայն լաւ ի միտ առնուք թէ՛ ի՞նչ է էջմիածնայ կաթողիկոս, ի՞նչ է Սոյ կաթողիկոս, ի՞նչ է Աղթամարայ կաթողիկոս և ի՞նչ է Պատրիարք, որպէս զի կարելի լինի Պատրիարքութեան հանդերձին բարւոք ձեւ մը տալ: Բաւական չէ ասել միայն թէ մի Պատրիարք՝ Ժողովրդեան ընտրանօքն ու հաւանութեամբն՝ Նախագահ է Ազգ. վարչութեան, վասն զի Պապն ալ երբ Պապ է եղեր, բոլոր հասարակութեան հաւանութեամբն է եղեր. արդ ի՞նչ տարբերութիւն կը մնայ Պապին և մեր Նախագահին մէջ:

Մեր Տէրութիւն՝ աւելի պատիւ մ'է ըրեր մեր Ազգին, մեր Եպիսկոպոսներէն մէկուն Պատրիարքութիւն տալով և զայն գերիշխան համարելով միւս Եպիսկոպոսաց վրայ. արդ՝ մե՞ծ բան մ'ըրած կը լինիք երբ նորա պետ կամ հայր տիտղոսը տամք, կաթողիկոսն ալ մի հոգեւոր տէր է Արարատեան Աթոռին վրայ, բայց հետամուտ եղած էք բնաւ գիտնալ թէ ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի նա և յո՞ր ծայր հասուցած է ուստիարենակ ազգայնոց ընկերական վիճակը: Պէտք է զստնք ի նկատի առնուլ, ինչպէս ես առած եմ: Շատ բաներ կան խօսելու և անանկ բաներ՝ զոր չեմ կարող հրատարակաւ ասել, ուստի կ'եզրակացնեմ խօսքս թէ՛ Պատրիարքն ինչպէս որ ի վաղուց անտի գերիշխանութիւն մ'ունէր Արքեպիսկոպոսաց վրայ և պետ էր մեր Ազգի, որոցմով մեր ազգային ընկերականութեան էական տարբերանձնաւորուած են, անփոփոխ մնայ իր վիճակին մէջ և իրաւունք ունենայ մեր ամեն գործառնութեանց միջամուխ ըլլալու:

Ատենան այս միջոցիս ընդհատելով, Ժողովը պահ մը դադար կ'առնու:

Քառորդ մը վերջն Ատենապետ էֆ. կրկին անգամ ատենը կը բանայ և կը խնդրէ Ժողովականներէն որ՝ արդէն ըսուած խօսքերն առանց կրկնելու՝ ամիսի կերպիւ յառաջ բերեն իրենց զիտողութիւնները:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Վիճարանութեանց երկարելուն պատճառը խմբագրութեան խնդիր չէ՛ այլ սկզբունքի, ուստի վերաքննութեան խնդրոյն մէջ պէտք է որ երկայնամիտ լինի Ժողովը և ոչ երբէք աճապարէ գայն փութով յառաջ տանելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ պէտք է երկայնամիտ լինի՛ պէտք է նաև այս երկայնամտութիւնը սահմանեալ ժամանակի մը մէջ ամիսփելի, այսինքն վերաքննութեան համար միայն մէկ քանի ժամ որոշել, որպէս զի ազգային ընթացիկ գործոց ձեռնարկելու ալ ժամանակ ունենամք:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Վերաքննութեան խնդրոյն համար ոչ մի, ոչ երկու, ոչ երեք ժամեր կը բաւեն, զի այնպիսի խնդիրներ ունիմք առաջնիս՝ որ օրուան խնդիրներ են, հացի, դաստիարակութեան, տրոց, դաւառական հարստահարութեանց խնդիրներ, որոց լուծումը որչափ երկար ժամերու՝ նոյնչափ ալ երկայնամտութեան կարօտ է: Ուրեմն հարկ չէ վերաքննութիւնը սահմանեալ վիճակի մը մէջ մտացընել, այլ համբերատար ոգւով գործել և յառաջ երթալ:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ես ալ համամիտ եմ Սրբազան Նախագահի առաջարկութեան թէ՛ մեծ համբերութիւն պէտք է և երկայնամտութիւն՝ Սահմանադրութեան վերաքննութեան մասին, վասն զի այնպիսի խնդիրներ կան՝ զոր չեմք կրնար միայն պարզ տեսութեան մը ներքեւ ձգելով անցնիլ, առանց զանոնք լուսարանելու լուրջ և զգաստ զիտողութիւններով:

Կան կէտեր՝ որ կրօնականի կը վերաբերին, և կէտեր՝ որ քաղաքականի, հետեւաբար Սահմանադրութիւնն որչափ իր կրօնական վեհութիւնը, նոյնչափ ալ իր քաղաքական ազդեցութիւնն ունեցած է: Իրաց այս վիճակին մէջ՝ չեմ գիտեր ի՞նչ կը նշանակեն այն կարծիքներն որոցմէ՛ ոմանք Պատրիարքական իշխանութիւնը սեղմելու վրէժխնդրութեամբ յառաջ կուգան և ոմանք զայն ընդարձակելու բարեմտութեամբ: Այս հակառակ կարծեաց առջեւ՝ Ազգի կեան էֆ. ի հետ զուգաձայն՝ կ'ըսեմ թէ Պատրիարքութեան հանդերձն ինչպէս որ ձեւուած է՝ ի

հնուն եկեղեցական իշխանութեմը, նոյնը ան-
 փոփոխ պարտիսը պահելը: Պէտք է մեզ ազգային
 պատմութեան յեռու, և հետեւիլ նախեաց՝
 կաթողիկոսութեան և Պատրիարքութեան ըզ-
 դեստուց տուած ձեւին, և ոչ թէ միոյն պաշ-
 տօնական իշխանութիւնը նուազել, միւսին իշ-
 խանական աթոռը բարձրացնելու նկրտիլ: Հե-
 տեւապէս՝ պէտք է մեզ անխափելի պահել այն
 փոխադարձ յարաբերութեանց կապերն, որք
 կաթողիկոսական և Պատրիարքական աթոռ-
 ներն ՚ի մի յօդած են հոգեւորապէս: Ուստի
 կ'առաջարկեմ որ՝ ՚ի բաղմաց անտի տեղի ու-
 նեցած կաթողիկոսական և Պատրիարքական
 հոգեւորական յարաբերութեանց՝ պայմաննե-
 րուն վրայ պէտք եղած պատմական տեղեկու-
 թիւններն ամփոփելու և ժողովոյն հաղորդելու
 կարեւոր դործոյն համար՝ յանձնած ողով մը կազ-
 մուի, որպէս զի յատենի աստ կարող ըլլամք
 Պատրիարքութեան պաշտօնի ձեւն յերեւան
 ածել:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. Է.Ֆ. — Այս աւուր վիճարա-
 նութեանց շարքը՝ աստիճաններու փոփոխու-
 թեանց բաղխելով մեծ դժուարութիւններ յա-
 րոյց մեր առջեւ:

Կաթողիկոս մ'ունինք Ռուսաստանի մէջ՝ որ
 ՚ի սկզբանէ անտի հպատակ է Ռուսոյ տիրու-
 թեան, և մեր աչքին մեծ երեւցած այն կա-
 թողիկոսը՝ իրը հպատակ՝ պարտաւոր է Ռու-
 սական օրինաց հնազանդելու: Նոյնպէս Տաճ-
 կաստանի մէջ Պատրիարք մ'ունինք՝ հպատակ
 Օսմանցոյն, որուն պաշտօնը կը սահմանաւորի
 Տաճկաստանի քաղաքականութեամբ և որ՝ իրը
 հպատակ Օսմանեան տիրութեան՝ պարտաւոր
 է անոր օրէնքներուն հպատակելու: Տակաւին
 Ասոյ և Աղթամարայ կաթողիկոսական խնդիր-
 ներն որոշ կերպարանք մը չունին՝ իրաց արդի
 վիճակին մէջ: Արդ՝ երբ Պատրիարքի ընտրու-
 թեան զրայ է խնդիրը՝ կ'ըսեն ոմանք թէ կ.
 Պօլսոյ Պատրիարքն առաջնորդաց կարգն է,
 աչք՝ թէ կաթողիկոսի հաւասար է, և ըսող
 ալ կոյ թէ՛ կ. Պօլսոյ Պատրիարքը կաթողիկո-
 սին կախում ունենալու է սակայն ո՞ր խնդ-
 րոց մէջ առաջնորդաց կարգէն է, ՚ինչ իրա-
 ւամբ կաթողիկոսի հաւասար է և կամ ո՞ր օրի-
 նոք անկէ կախեալ է՝ բացատրուած չ'է: Ստոյգ
 է որ կ. Պօլսոյ Պատրիարքներն՝ ըստ որում ե-
 կեղեցական՝ կրօնական խնդրոց մասին յարաբե-
 րութիւն ունեցած են Էջմիածնայ կաթողիկո-
 սին հետ, սակայն կ. Պօլսոյ Պատրիարքութիւնն

և ո՛չ մի առթիւ անկէ կախեալ դիրք մ'ունեցած
 է: Արդ քանի որ Ռուսաստանի կաթողիկոսու-
 թիւնն այնպիսի վիճակ մ'ունի այսօր, զոր մագիւ-
 շտի շեմք կրնար խախտել այն վտանգալից վի-
 ճակէն, թէ և բոլոր Տաճկաստանիքս ալ ոտք
 երնեմք՝ փոխանակ կ. Պօլսոյ Պատրիարքութիւնն
 ալ կաթողիկոսութեան վիճակին հասցնելու՝ զայն
 անոր իրաւասութեան մէջ ամփոփելով, բաւա-
 կան է որոշել թէ կ. Պօլսոյ Պատրիարքը՝ միմիայն
 կրօնական խնդրոց մէջ՝ իր ձեռնհասութեանէն
 վեր եղած խնդիրները յայտնէ Էջմիածնայ կա-
 թողիկոսին. յայնժամ հարկ չը մնար մեզ մշտ-
 նել այնպիսի խնդրոց մէջ, որոնք զոյգութիւն
 չունին և ունեցած չեն. վասն զի չեմ կարծեր
 թէ կ. Պօլսոյ Պատրիարքն այլ և այլ պարագա-
 ներու մէջ կամ ամեն կարգի խնդրոց համար
 ալ հաղորդակցութիւն կամ յարաբերութիւն ու-
 ունեցած ըլլայ կաթողիկոսին հետ:

Ատենապետ է.Ֆ. կ'ընդմիջէ զատենաբանը և
 խնդրէն շեղած ըլլալն կ'աղաւարտէ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. Է.Ֆ. — (Նարեւոտիկով) Երես-
 փոխան է.Ֆ. ներէն մին առաջարկեց որ՝ Պատ-
 րիարքը միայն կեղրոնական վարչութեան Նա-
 խագահն ըլլայ. բայց ըստ որում չեմք զիտեր
 հիմայ թէ վերաքննութեան միջոցին ՚ինչ կեր-
 պարանք պիտի առնուն ժողովներն, ՚ինչպէս
 զայն այժմէն կրնամք նախագահ հրատարակել:
 Ուստի կ'ամփոփեմ խօսքս և ընտրութեան ե-
 դանակին մէջ տարիքի վրայ չը խօսելով, վասն
 զի ընտրողք արդէն կրնան որոշել թէ այս ինչ
 տարեկան եղող ընտրելին Պատրիարքութեան
 պաշտօնին ձեռնհաս է թէ ոչ, սա միայն կ'ա-
 ռաջարկեմ որ՝ Պատրիարք եղող անձը չը կրնայ
 որ և է առթիւ քաղաքական խնդրոց վրայ թըղ-
 թակցիլ Էջմիածնայ կաթողիկոսի հետ, զի Նա
 Ռուսոյ՝ իսկ մենք Օսմանեան հպատակ եմք:
 Առ այժմ հոս կը դադրիմ խօսելէ ՚ի հար-
 կին պէտք եղած բացատրութիւնը տալու պայ-
 մանաւ:

ՓԱՓՅՉԵԱՆ Ս. Է.Ֆ. — Չեմ ուզեր յուղեալ
 խնդրոց մասին որ և է ակնարկութիւն ընել,
 վասն զի այդ խնդիրներն իրենց մէջ կ'ընտրու-
 ունին և խնամով քննութեան ու բացատրու-
 թեան կարօտ են: Կը կրկնեմ միայն առջի
 խօսքս որ՝ այդ կ'ընտրու խնդիրները նախ մաս-
 նախաբան մը յանձնեմք, որ ՚ի նկատի առնու-
 զանձնք և պէտք եղած բացատրութիւնը հա-
 ղորդէ ժողովոյն . . .

Այս պահուս Պէկեան է.Ֆ. փախազեան է.Ֆ. ՚ի
 խօսքն ընդմիջելուն համար յուղղութիւն կը հը-
 բաւիրուի Ատենապետ է.Ֆ. էն: Ատենապետ
 է.Ֆ. կ'ստիպէ զփախազեան է.Ֆ. խօսից թեւը
 ձեռք առնել, սակայն նա չը խօսիր:

ՊէկեԱՆ Թ. Է.Ֆ. — Ատենաբան է.Ֆ. ներուն
 խօսքերուն նայելով՝ կը տեսնեմ որ ոմանք կը
 կարծեն թէ Պատրիարքի պաշտօնը պղտիկցնել
 կամ սեղմելու միտում մը կոյ. սխալ է այս ըմ-
 բռնումը՝ և ոմանք ալ կը կարծեն թէ առ կա-
 թողիկոսական Մայր Աթոռն մեր ունեցած ակ-
 նածութիւնը՝ սրտականութեան սկզբունք մ'է.
 այս աւելի մեծ սխալ մ'է: Մենք չուղեցինք սահ-
 մանադրել Պատրիարքին իշխանութիւնը, այլ
 ինչ որ է իր հեղինակութիւնը՝ զայն նկարագ-
 րեցինք, իրականութիւնը խօսեցանք. ինչ որ
 իրեն չ'էր պատկաներ՝ չ'ուղեցինք իրեն յատ-
 կացնել, և արդարեւ կարող ալ չ'էինք ընել՝
 առանց եկեղեցոյ հաստատեալ օրինաց դէմ
 դործելու: Աւարկողք եղան վերստին թէ կ.
 Պօլսոյ Պատրիարքութիւնն արդարեւ հոգեւոր
 պետութիւն մ'է, Եպիսկոպոսապետութիւն
 մ'է, ընդհանրական Պատրիարքութիւն մ'է եւ
 այլն. և իրենց առարկութիւնը հաստատե-
 լու համար եկեղեցական պատմութեան անունը
 քանից՝ մէջ բերին սակայն և ոչ մէկ վրայու-
 թիւն ու ասպարոյց կրցան մէջ բերել, Պատրի-
 արքին վրայ կրօնական գերիշխանութիւն մը
 հաստատելու համար. 400 տարուքէ ՚ի վեր
 քաղաքական պատահարներու ծնունդն եղող
 աթոռի մը կարծեցեալ կրօնական հեղինակու-
 թիւնը հաստատելու համար՝ ՚ի զուր եկեղեցա-
 կան պատմութիւնն օգնութեան կանչեցին:
 Մենք մաստ ու ասպարոյց խնդրեցինք մեր ա-
 ռարկութիւնը հերքելու համար, բայց ոչ որ
 կրցաւ մաստ մէջ բերել. աստ ուրեմն իրա-
 ւունք կ'ստանամ իմ համազումս կրկնելու թէ՛
 կ. Պօլսոյ պատրիարքը ոչ կրօնական պետ է Օս-
 մանցի Հայոց և ո՛չ ալ ներկայացուցիչ է ա-
 մենայն Հայոց կաթողիկոսին. կ. Պօլսոյ Պատ-
 րիարքի կրօնական պաշտօնը բարձր չ'է Եպիս-
 կոպոսի մը պաշտօնէն, որովհետեւ Եպիսկոպոս
 մը երբ կ'ընտրուի Պատրիարք՝ բնաւ ձեռնադ-
 րական արարողութիւն մը չը կատարուի վը-
 րան, և ըստ որում առանց ձեռնադրական ա-
 րարողութեան եկեղեցոյ առջեւ եկեղեցականի
 մը պաշտօնը չը բարձրանար, հետեւաբար Պատ-
 րիարքին եկեղեցական պաշտօնը նոյն կը մնայ
 ինչ որ էր սոսկ Եպիսկոպոս գոյնուած ատենը,

և ահա ասոր համար է որ Պատրիարք մը պաշ-
 տօնէ դադարելէ ետեւ կ'ըլլայ դարձեալ սոսկ
 Եպիսկոպոս: Հասա ՚ինչ է, պիտի ըսուի, կ.
 Պօլսոյ Պատրիարքին կրօնական պաշտօնը. չու-
 նի՞ միթէ՞ բաց ՚ի քաղաքականէն՝ իշխանութիւն
 մը՝ որով տիրէ բոլոր Օսմանցի Հայոց աշխար-
 հականաց ու եկեղեցականաց վրայ. — այո՛,
 ունի, զոր ընդ աղօտ կը նշմարեն ոմանք և
 ահա պէտք է փնտռեմք թէ ՚ինչ է և ո՛ւր կը
 կեղրոնանայ: Հայաստանեայց եկեղեցին եկե-
 դեցականութեան կոչման համար սկզբունք մ'ու-
 նի, այն է ժողովրդեան ընտրութիւնը. ժողու-
 վուրդը կ'ընտրէ, կղերը կը ձեռնադրէ. առանց
 ժողովրդեան ընտրութեանն ու հաւանութեանը
 ձեռնադրութիւն չը կրնար ըլլալ. արդ կը տես-
 նէ՞ք, երեւոյթական է.Ֆ. ներ, Հայաստանեայց
 եկեղեցոյ ժողովրդեան ձայնն ՚ինչ մեծ դեր
 ունի. և ահա՛ ասով է զլլաւորապէս որ Հա-
 յաստանեայց եկեղեցին յանհունս կը տարբերի
 պապական եկեղեցիէն. ժողովրդեան այս ձայ-
 նը աննշան մի համարիք յուզման ենթակայ
 խնդրոյն մէջ. այս ձայնն է որ Պատրիարքին
 իշխանութիւնը պիտի տանի տարածէ բոլոր Օս-
 մանցի Հայ աշխարհականաց ու եկեղեցականաց
 վրայ: Իրաւ է թէ կ. Պօլսոյ Պատրիարքը ձեռ-
 նադրական առաւելութիւն մը չ'ունի սոսկ Ե-
 պիսկոպոսէ մը, սակայն Տաճկաստանի ընդհա-
 նուր ժողովրդեան ընտրական ձայնին զօրու-
 թեամբն առաւելութիւն մը կ'ստանայ. Էջմի-
 ածնայ կաթողիկոսին՝ իր կրօնական հսկողու-
 թեան իրաւասութիւնն ուղղակի ՚ի դործ դնե-
 լու քաղաքական դժուարութեանց առթիւ՝ Տաճ-
 կաստանի ընդհանուր Հայոց ձայնով կ. Պօլսոյ
 Պատրիարքն անոր ընտրութեամբ ըլլայ ընդհա-
 նուր առաջնորդ. բոլոր Տաճկաստանի Հայոց, ո-
 րով իրաւունք կ'ստանայ և իշխանութիւն կ'առ-
 նու՝ աջակցութեամբ ժողովոց հսկել բոլոր Տաճ-
 կաստանի Հայ աշխարհականաց ու եկեղեցա-
 կանաց վրայ և աղգային կրօնական դործոց
 ընդհանուր տեսչութիւնը վարել, իր ընդհա-
 նուր առաջնորդական իրաւունքովը: Այս է ա-
 հա Պատրիարքին կրօնական պաշտօնն ու իշխա-
 նութիւնն՝ իր իսկութեամբն ու ամենայն ըն-
 դարձակութեամբը, որ ՚ինչպէս կը տեսնուի,
 կարծուած ին պէս ոչ սեղմեալ է և ոչ ալ նուազ-
 եալ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ճմարիտ է որ Պատ-
 րիարք մը սահմանելու կամ անոր հագուստ մը
 ձեւելու համար որքան ուղեմք կրնամք բանաս-

տեղծել : Երբ Պատրիարքի հազուստ մը ձեռնառու առաջարկութիւններ կը ըլլային , կ'սպասէի որ դիտողութիւններ ալ ըլլային այն հազուստի արդէն ձեռած ըլլալուն նկատմամբ : Ինչո՞ւ համար կ'աշխատիք Պատրիարք մը բարձրացնել կամ նուաստացնել . արդէն նա ունի իր օրինական վիճակ ու ձեռ , զոր կրնամ ձեր ուշադրութեան ներկայացնել : Օսմանեան կայսրութիւն՝ զկ. Պոլսոյ Պատրիարք հայոց գեապան կը ճանաչէ քաղաքականապէս և նա դեսպանութենէ աւելի պաշտօն մը չունի Բ. դրան առջև կատարելիք : Իսկ կրօնականապէս՝ երբ ժողովուրդեան կողմանէ Պատրիարք կրնորուի՝ կաթողիկոսի փոխանորդն է միայն , հետեւապէս պէտք է ընդ միշտ յարաբերութիւն ունենայ կաթողիկոսի հետ , և ասի՝ ոչ Ռուսիոյ և ոչ Տաճկաստանի քաղաքականութեան վնասառիթ է : զի այս տեսութիւնները կրօնական խնդրոց վրայ հիմնեալ են . թէ և ես հոգեւորական իշխանութեանս մէջ հազիւ երկու գիր գրած եմ ցարդ Վեհ . կաթողիկոսին , Պատրիարք մը իր հոգեւոր պաշտօնին մէջ սերտիւ կապակցեալ է Անոր , ուստի և Աղաբէկեան էֆ . ի բացատրած այս կէտը շատ ճիշդ է : Բայց որպէս զի բարեւոք ձեռ մը տրուած ըլլայ Պատրիարքութեան , կ'ամբողջութեամբ սա առաջարկութեամբ , զոր ձեր ուշադրութեան կը ներկայացնեմ : « Կ. Պոլսոյ Պատրիարք՝ ի ռեզիմաց ամենայն Հայոց կաթողիկոսին էջմիածնայ՝ համայն Տաճկաստանի հայոց փոխանորդարար տեսուչ և հովիւ է . իսկ Օսմանեան Տէրութեան Բ. դրան առջև՝ իբրեւ միջնորդ կը հանդիսանայ այն ամեն յարաբերական խնդրոց մէջ , որ Բ. դրան և Ազգին մէջ կը պատահին . միանգամայն Ազգային Սահմանադիր կառավարութեան մէջ գործադիր իշխանութիւն կը վարէ : »

ՔԻՒՐՔԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ . — Կառաջարկեմ Դիւանին որ Պատրիարքի ընտրութեան և պաշտօնի վերաբերեալ խմբագրուած այս դիտողութիւններն ժողովոյ ուշադրութեան ներկայացնէ , և զորն որ արժան դատէ ժողովն ընդունի՝ այն արձանագրուի ատենագրութեան մէջ և անցնիք ուրիշ խնդրոց :

ԻԻԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ . — Երեսփոխաններէն ոմանք ուզեցին Պատրիարքական իշխանութիւնը սեղմել , և ոմանք զայն ընդլայնել : Այս երկու հակառակ կարծեաց առջև հարկ կը դատուի թէ՛ մեր եկեղեցական կառավարու-

թիւնը միասնական չէ՝ այլ ՚ի վաղուց անտի հասարակապետական , և ո՛չ որ այս իրաւունքը կրնայ հասարակաց ձեռքէն կորզել : ՚ի հնունս երբ այնպիսի խնդիրներ կը յուզուէին , գրաւագգ . իշխանական մարմինը չէր ձեռնհաս լուծելու , ժողովուրդը կը հրաւիրուէր , որ կրնար ամեն ինչ կարգադրել , կամ եթէ հարկ է ըսել , կրնար մինչև իսկ կաթողիկոս մը կարգել և ՚ի հարկին զայն իր աթոռէն վար առնուլ : Մի և նոյն ժողովուրդն է դարձեալ այսօր որ Պատրիարք մը կրնորէ , անոր պաշտօնին կրկին կերպարանք տալով , այն է՝ տեսչական և հոգեւորական : Կայ ձեռնադրական կարգաւորութիւն մը՝ որ եկեղեցական կառավարութեան կը վերաբերի և եկեղեցականք՝ միայն այդ կառավարութեան մէջ իրենց մասն ունին , բայց տեսչական մասին մէջ ժողովուրդն ալ իր իրաւունքն ունի և ժողովուրդեան այս իրաւունքն երբէք Պատրիարքի հոգեւորական իշխանութեան հետ առնչութիւն չունի : Արդ՝ Պատրիարք մը իր Հոգեւոր ժողովով կը վարէ իր հոգեւորական իշխանութիւնը , ինչպէս էջմիածնայ կաթողիկոսը իր Սինդոնիս , և իր տեսչական իշխանութիւնը կը վարէ Ազգ . կեդրոնական վարչութեամբ : հետեւապէս՝ Պատրիարք մը ընդհանուր տեսչութեան պաշտօն մ'ալ ունի համայն Տաճկաստանի Հայոց վրայ , զոր պէտք չէ բացառիկ համարիլ իր ունեցած հոգեւորական պաշտօնէն :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Ճմարտ է որ մեր եկեղեցին հանրապետական է և նուիրական , բայց պէտք է զայն նուիրագործողին ալ հայիլ : ժողովուրդը՝ միայն ձեռնադրելի մը կը ներկայացնէ կաթողիկոսին , կաթողիկոսէն կախեալ է ձեռնադրութեան գործը . ժողովուրդեան ձայնը՝ թէ և կրնայ ձեռնադրութիւն մը արգելուլ , բայց չըկրնար ոչ զոր ձեռնադրել : Երբ կաթողիկոսը կը ձեռնադրէ զմի որ եպիսկոպոս , այս է իր տուած իշխանութիւնը , հովուել զժողովուրդ , մատակարարել անոր հոգեւոր պէտքերը , քարոզել և անել զայն յուղղութիւն , և այլն : Այս խօսքերը միայն մէկ շրթունքէ կը բղխին և ժողովուրդն այս խօսքերուն մէջ մաս չունի , վասն զի այդ հեղինակութիւնը՝ ձեռնադրողին վերապահեալ է : Արդ՝ ազատամիտ ըլլալ պէտք է ասանկ փափուկ խնդրոց մէջ , և ոչ թէ եկեղեցական կարգաւորութիւնը ձուլել քաղաքական իշխանութեան մէջ :

Ատենը գոցելու որոշեալ ժամը քրացած

լինելով՝ Ատենապետ էֆ . վիճարանութիւնը դադարեցուց , յաջորդ նստին շարունակուելու և այսօրուրնէ խօսից ցանկին մէջ նշանակուած երեսփոխանաց , ՚ի սկզբան խօսք տրուելու պայմանաւ :

Յաջորդ նստին գումարման օրն որոշելու համար երեսփոխանք ոմանք հարցում ուղղեցին Դիւանին , և այս առթիւ հետեւեալ խօսքերը տեղի ունեցան :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ . — Կառաջարկեմ որ յաջորդ նիստը 13 օրէն գումարի :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Լաւ կը ըլլայ եթէ 21 օր միջոց թողուի մինչև յառաջիկայ նիստ , որ համարատուութեան տեղեկագիրն ալ տարաբերալ և երեսփոխանաց հաղորդուած ըլլայ :

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ . Սահմանադրութեան վերաբննութիւնը յառաջ տանելու նպատակաւ՝ լաւագոյն կը համարիմ որ ժողովը 13 օրէն գումարի և այս խնդրով դբաղի . այն ատեն մինչև միւս նիստ՝ ամիս մը միջոց կը մնայ համարատուութեան տեղեկագիրն տարաբերութեան :

ԱՏԵՆԱԳՊԻՐ ԷՖ . — Ես յատկապէս պիտի խնդրեմ ժողովէն որ յաջորդ նստին գումարու մը 21 օր ետ ձգէ , և այնպիսի պատճառաւ մը՝ որ թերեւս մէջ բերուածներէն օրինաւոր ըլլայ : Թովմաս էֆ . հիւանդութեան առթիւ բացակայ է Դիւանատուէն և այս պատճառաւ քաղաքական ժողովոյ գրութեանց պատրաստութեան հոգն ալ թէլեան էֆ . ին վրայ մնացած է ամբողջապէս , որով չը պիտի կարենայ անմիջապէս այս նիստին ատենագրութիւնը խմբագրելու դբաղիլ ազատօրէն : Այս պարագային առջև քանի մ'որ աւելի միջոց ունենալու պէտք կը տեսնեմ և կարծեմ թէ ժողովն ալ՝ վերաբննական վիճարանութիւններով լի նիստի մ'ատենադրութեան խմբագրութեանը համար՝ կատարեալ ինամ տանելու հարկը կ'ըզգայ ինձ պէս և հետեւաբար կընդունի իմ առաջարկութիւնս :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ . — Ատենադպիր էֆ . ի մէջ բերած պատճառն իրաւացի է , վասն զի Պատրիարքարանի դիւանական գործերն ամբողջապէս թէլեան էֆ . ին վրայ ծանրացած են . ուստի ես ալ կը ձայնակցիմ Ատենադպիր էֆ . ին և առաջին առաջարկութիւնս յետս կը կոչեմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ . — Ընդունելի դրութիւն չէ անձնական պատճառներու համար նիստը ետ թողուլ . զի հետեւաբար հարկ կը ըլլայ աղօթել որ թէլեան էֆ . ալ չը հիւանդանայ այս միջոցին :

Ատենադպիր էֆ . կրկին անգամ խօսք առնուլ կուզէ իր առաջարկութեան վրայ բացատրութիւն տալու և անոր կարեւորութիւնը զգացընելու համար , սակայն ժողովն հաւանելով յաջորդ նիստին 21 օր ետքը գումարուելուն , հարկ չը մնար անոր կրկին խօսելու :


Ատենադպիր էֆ . կը յայտնէ որ ըստ ներկայութեան տումարի երեք յաջորդական բացակայութիւն ունեցած են ,



- Աղամճեան Յովսէփ էֆ .
- Կրճիկեան Անդրանիկ պէյ .
- Մօմճեան Միքայէլ էֆ .
- Ներսէսեան Գրիգոր էֆ :

Գլխողներ եղան թէ ասոնցմէ ոմանք՝ Գ. վիճակաւ դադարելի ըլլալով՝ հաւանականաբար հարկ տեսած չ'ըլլան ժողովոյ նիստերուն ներկայանալու . սակայն ըստ որում Գ. վիճակաւ դադարելի երեսփոխանք՝ ըստ որոյման ժողովոյ՝ մինչև ցնոր ընտրութիւն իրենց պաշտօնը պիտի շարունակէին , հետեւաբար ժողովը զատնք՝ իրենց յաջորդական երրորդ բացակայութեամբ՝ ինքնին հրաժարեալ հրատարակեց :

Ատենը գոցուեցաւ ՚ի ժամ 10 1/2 :

ՓՈՒՍՆԱԿ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԱՏԵՆԱԳՊԻՐ
Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Յ. Հ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԵ





ԳԻՆ 2 ԴՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Գիւ անատուն Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցւոյ բանկալները :